Արձանագրություն N 2

«ՎԱԿՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/8» ծածկագրով Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 12.07.2019թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝

Կրթության տեսչական մարմնի ղեկավար — Ալեքսանդր Շագաֆյան

Հանձնաժողովի անդամներ՝

Կրթության տեսչական մարմնի հանրակրթության վարչության պետ — Ավետիսյան Սուրեն

Կրթության տեսչական մարմնի հանրակրթության վարչության գլխ. Մասնագետ — Խաչատրյան Արամ

Կրթության տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծության և գնահատման վարչության գլխավոր մասնագետ — Լեյլի Սարգսյանց

Կրթության տեսչական մարմնի Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության գլխավոր մասնագետ — Աշոտ Թումանյան

Հանձնաժողովի քարտուղար՝

վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ — **Ռոզա Ասատրյան**

1. *«ՎԱԿՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/8» ծածկագրով Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու* ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին

Ընդունել ի գիտություն, որ

1.1 ***«ՎԱԿՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/8»*** ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացումը կատարվել է էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների *Armeps (www.armeps.am)* համակարգի միջոցով, 2019թ.-ի հուլիսի 9-ին ժամը 11:00-ին, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական թիվ 1 շենք հասցեում: Համակարգի միջոցով հայտ էին ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

հհ	Մասնակիցների անվանումները	Էլ.-փոստ
1	«Միսմա» ՍՊԸ	info@misma.am
2	«Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան»	hovhannisyan8118@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2 Մասնակիցներ «Միսմա» ՍՊԸ-ի և «Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան»-ի Armeps *(www.armeps.am)* էլեկտրոնային համակարգ մուտքագրած հայտում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը (**Հավելված N 1**՝ Դիմում գնանշման հարցմանը մասնակցելու, **Հավելված 2**՝ Հայտարարություն մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին, **Հավելված 2.1**՝ Տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին, **Հավելված 3**՝ Հայտարարություն որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին, **Հավելված 4**՝ Հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին և **Հավելված 5՝ Գնային առաջարկ**) առկա են և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.3 Մասնակիցներ «Միսմա» ՍՊԸ-ի և «Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան»-ի կողմից ներկայացրած գնային առաջարկները հետևյալն են

Չ/Հ	Գնման Առարկան	Նախահաշվային Գինը	Մասնակցի անվանումը	Գինը Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ն ներառյալ
4	Հատակի լվացման լաթ	12000	«Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան»	12000	-	12000
			«Միսմա» ՍՊԸ	14400	-	14400
5	Կահույք մաքրելու լաթ	25000	«Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան»	25000	-	25000
			«Միսմա» ՍՊԸ	30000	-	30000
11	Պոլիէթիլենային պարկ, աղբի համար	25000	«Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան»	25000	-	25000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.4 ***«ՎԱԿՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/8»*** ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. *«ՎԱԿՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/8» ծածկագրով* ընթացակարգի նիստի արդյունքների ամփոփման մասին

2.1 Հանձնաժողովը որոշեց.

Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

Չ/Հ	Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակիցների անվանումները
4	1	«Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան»
	2	«Միսմա» ՍՊԸ
5	1	«Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան»
	2	«Միսմա» ՍՊԸ
11	1	«Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան»

Ընդուվել է որոշում՝ կողմ-5, դեմ -0

2.2. Ընթացակարգի 1, 2, 3, 6, 7, 8, 9, 10, 12, 13, 14, 15, 16, 17, 18-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասի համաձայն՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:

Ընդուվել է որոշում՝ կողմ-5, դեմ -0

2.3 Հիմք ընդունելով "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը հանձնաժողովը որոշեց էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև էլեկտրոնային փոստի

միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. *«ՎԱԿՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/8»* ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

3.1 Հանձնաժողովը որոշեց *«ՎԱԿՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/8»* ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության տրամադրման, առաջին տեղը զբաղեցնող մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը և գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող օրը ժամը՝ 11:00-ին, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական թիվ 1 շենք հասցեում :

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի			
Նախագահ՝	Ալեքսանդր Շագաֆյան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Ավետիսյան Սուրեն	ԳՊ/ԳԱ	
	Խաչատրյան Արամ	ԳՊ/ԳԱ	
	Լեյլի Սարգսյանց	ԳՊ/ԲԱ	
	Աշոտ Թումանյան	ԳՊ/ԲԱ	
Քարտուղար՝	Ռոզա Ասատրյան	ԳՊ/ՄՀՄ	